«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մկրտիչ Խրիմյան

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Մարինա Բաղդասարյան

Երևանի թիվ 2 ավագ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Նուլնե Ասրյան

Բովանդակություն

1. **Ներածություն**.....3

2. **Գլուխ I**

Կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը.....4

ա)կենսագրությունը և հասարակական-եկեղեցական գործունեությունը

բ) երկաթե շերեփ

3. **Գլուխ II**

Գրական կյանք.....15

4. **Եզրակացություն.....**19

5. **Օգտագործված գրականության ցանկ.....**21

Ներածություն

«Ներքին անհամերաշխությունը ավելի շատ է Հայրենիքը
կորստյան մատնում, քան եկած թշնամին»
Մկրտիչ Խրիմյան

Հայ ժողովրդի այս բախտորոշ ժամանակաշրջանը վերլուծելու և ընկալելու համար փորձեցինք անդրադառնալ և համեմատել XIX դարի կեսին և XX դարի սկզբին տեղի ունեցող իրադարձությունները այսօրվա հետ: Այդ իրադարձություններին ծանոթանալիս հեշտությամբ համոզվում ենք, որ աշխարհի քաղաքական բեմահարթակի վրա շատ քիչ բան է փոխվել հօգուտ մարդկայնության: Անցյալը ուսումնասիրելիս հասկանալի է դառնում այսօր տեղի ունեցածը:

XIX դարի հայ հասարակական կյանքն ու միտքը տվել է բազմաթիվ ականավոր դեմքեր, ժողովրդանվեր գործիչներ: Այդ գործիչները, կորցրած պետականությունը, հայրենիքի անշուք ներկան հակադրելով անցյալի հզոր իշխանների ու թագավորությունների, միացյալ Հայաստանի գաղափարին, ցանկանում էին ժողովրդի մեջ անթեղված ազատության կայծերը բորբոքել, արթնացնել ազգային ինքնագիտակցության ու արժանապատվության զգացումը: Այդ գործում իր մեծ ավանդն ունի Մկրտիչ Խրիմյանը: Մկրտիչ Խրիմյանը պատմական այն դեմքերից է, որ իրենց ժամանակակիցների աչքում արդեն առանձնանում են հասարակ մահկանացուներից, դառնում խորհրդանիշ, օրինակ, ուղեցույց: Եվ իր ժամանակակիցները նրան մեծարել են Հայոց Հայրիկ պատվանունով, արվեստագետները գծել են նրա դիմանկարը, բանաստեղծները փառաբանել են նրան որպես ճշմարտության անդուլ որոնողի, գաղափարի և ազատության ջահակրի:

Խրիմյան Հայրիկը, իր ազգանպաստ գործունեության ողջ ճանապարհին, առաջնորդվել է մի սևեռուն գաղափարով՝ ազատագրել Հայաստանը բռնատիրության ճիրաններից, աշխարհով մեկ սփռված հայերին հավաքել հայրենիքում, հոգևոր ու նյութական բոլոր ուժերը կենտրոնացնել երկրում և ստեղծել այնպիսի պայմաններ, որ այլևս հայը չհեռանա իր դրախտանման հայրենիքից:

Այս հետազոտական աշխատանքում ներկայացնելու ենք Մկրտիչ Խրիմյանի կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը (1820-1907թթ.), գրական և հրապարակախոսական-պատմական որոշ աշխատություններ, թևավոր մտքեր:

Գլուխ I

Կյանքը և հասարակական-քաղաքական գործունեությունը

ա) Կենսագրությունը և հասարակական-եկեղեցական գործունեությունը

Վստահաբար կարելի է ասել որ հայոց պատմության նոր շրջանում Խրիմյանից բացի չկա մի երկրորդ անձնավորություն, ով իր կանքով և ստեղծագործությամբ դարձել է հայ ժողովրդի ազգային իղձերի և զգացմունքների հավաքական և ամբողջական արտահայտողը: Նա, ով հայ ժողովրդին ուսանելուց և խրատելուց առաջ ապրեց հայության ցավերով:

Մկրտիչ Խրիմյանը ծնվել է 1820թ-ի ապրիլի 4-ին Վան քաղաքի Հայնկույսներ թաղամասում, Կրըմցոց կամ Խրիմցոց տանը: Տարազագործ հայրը զբաղվում էր վաճառականությամբ, իր պատրաստած հագուստները Վանից տանում էր վաճառելու Ղրիմում. նրանց ազգանունը այստեղից է առաջացել: Մանուկ Մկրտչի դաստիարակության գործը հանձն է առնում նրա հորեղբայրը՝ Խաչատուրը: Խրիմյանը շատ ջերմ է հիշում իր հորեղբորը, ով զբաղվում էր նաև նրա կրթությամբ: «Ահա այդ առաքինի և բարեսիրտ մարդն եղավ փոքրիկ Մկրտչի վարժապետը և դաստիարակը: Անպսակ լինելով, ուրեմն և զավակ չունենալով, նա իր ամբողջ ուշքն ու միտքը դարձրեց Մկրտչի վրա, որը մի զգայուն, կրակոտ և ընդունակ երեխա էր, որին հորեղբայրը սիրում էր իր աչքի լույսի պես: Խրիմյան Հայրիկին մանկության օրերից նա սովորեցրեց սիրել ընկերոջը, կարեկցել թշվառներին, խնամել հիվանդներին և հեռու մնալ ամեն տեսակ վատ բաներից: Հորեղբայրն է սովորեցրել ամեն առավոտ գնալ եկեղեցի և միշտ պատմում էր հայ հերոսների քաջագործությունների մասին»[1] :

Մկրտիչ Խրիմյանը նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, Լին ու Կտուց անապատներում գրաբար և հայագիտություն է ուսանել: Շուտով նա հեռացավ այդ մենաստաններից և հայտնվեց Վանում: Ուշիմ ու հարցասեր պատանին ծրագրում է հիմնավորապես ուսումնասիրել հայրենի երկիրը, նրա պատմությունը, ներկան: 1842թ-ի ամռանը երեք ընկերների հետ միասին պատանի Մկրտիչը հինգ ամիս շարունկ շրջագայում է հայրենի Վասպուրականի համարյա բոլոր գավառներում: 1848թ-ին Խրիմյանը Կ.Պոլսի Խաս գյուղի աղջիկների նորաբաց վարժարանում դառնում է ուսուցիչ: «Հայրենախոս ճառերով, ազգաշունչ զրույցներով երիտասարդ ուսուցիչը Կ.Պոլսի երիտասարդության ուշադրությունը բևեռում է «Խայաստանի» վրա»[2] :

[1] Խաչատուր Մալումյան. Խրիմյան (կենսագրական տեսություն), էջ10
[2] Էմմա Կոստանդյան,Մկրտիչ Խրիմյան. հասարակական քաղաքական գործունեությունը, էջ45

1851թ-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը նրան հանձնարարում է մեկնել Կիլիկիա և ուսունասիրել կրթական գործն ու բարելավել այն:

Մեկ տարի տևեց այդ աշխատանքն ու Մկրտիչ Խրիմյանը վերադարձավ Կ.Պոլիս: Խրիմյանը երկար չի մնում Կ.Պոլսում: Նա վերադառնում է Վան, որտեղ ծանր վիշտ էր սպասում նրան. մահացել էին մայրը, կինը, աղջիկը: Այլևս նրան ոչինչ չէր կապում աշխարհիկ կյանքի հետ: ԵՎ նա որոշում է ընդմիշտ նվիրվել հայոց եկեղեցու ծառայությանը: «Հոգևոր սպասավորն ավելի լայն հնարավորություններ ուներ հասարակական գործունեություն ծավալելու համար, քան աշխարհիկ անձը: Հոգևորական վեղարը կարող էր հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ»[3]: ԵՎ ընտիր ուսուցիչն ու քարոզիչը խանդավառ հայրենասերը 1854թ-ի փետրվարին Ախթամարում կուսակրոնություն է ընդունում: Մարտի 25ին նա իր վարդապետական առաջին քարոզն է կարդում Վանում: Խրիմյանը խոսքարվեստի, հատկապես կենդանի խոսքի անզուգական վարպետ էր: Սակայն Խրիմյանը չէր բավարարվում միայն քարոզներով: Ժողովրդի գիտակցության արթնացման համար հարկավոր էին առավել ներգործող միջոցներ, դրանցից առաջնայինը տպագիր խոսքն էր՝ մամուլը: 1855-1866թթ. հրատարակվել են «Արծվի Վասպուրականի» ամսագիրը: Նրա աշակերտներից մեկը պատմում է «Վասպուրականի Արծվի» ծննդի ու առաջին խմարականի մասին: «Դիմեցինք Հայրիկին որ նա առաջին համարի համար մի ոտանավոր գրի: Խոստացավ: Գիշեր էր, ժամը իննին կրտսեր աշակերտները գնացել էին քնելու, մնացել էինք մենք՝ ավագ աշակերտներս՝ չքնած: Հայրիկը իր առանձնասենյակում էր: Հանկարց լսեցինք Հայրիկի բարձր, հանգավոր ձայնը «Թռի՛ր արծիվւդ գեթ իմ սրաթև»: Դա «արծիվ Վասպուրականի» առաջաբանն էր»»»»[4] : Երեք տարի անց Խրիմյանը ամսագիրը փոխադրեց Վարագա վանք: Ամսագրին աշխատակցում էին գլխավորապես 1857թ-ի մարտին Խրիմյանի հիմնած «ժառանգավորած» դպրոցի սաները՝ Գարեգին Սրվանձտյանը, Արսեն Թոխմախյանը և ուրիշները:

1869թ-ին Հայրիկն ընտրվում է Կ.Պոլսի պատրիարք: «Խրիմյանը առաջին պատրիարքն էր, որ գործնական քայլերի դիմեց Կ.Պոլսի ազգային վարչությունը «սահմանադրական ազգի» վարչություն դարձնելու ուղղությամբ»[5]: Խրիմյանի նախաձեռնությամբ ստեղծվել է գավառահայության հարստահարությունը քննող հանձնաժողով, որի կազմած տեղեկագիրը Կ.Պոլսի Ազգային ժողովը 1872թ-ին ներկայացրել է Բարձր դռանը: Այդ գործունեությունը

[3] Խաչատուր Մալումյան նշվ. աշխ. , էջ15
[4] blognews.am և հանրագիտարան
[5] Ա. Ս. Խառատյան, Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, էջ117

հարուցել է թուրքական կառավարության և Կոստանդնուպոլսի հայ մեծահարուստների դժգոհությունը, որի պատճառով 1873թ ի օգոստոսին Խրիմյանը հրաժարվել է պատրիարքությունից:

Ծավալելով լուսավորական լայն գործունեություն Խրիմյանը իր դեմ լարեց խավարամիտ հոգևորականներին, որոնք զանազան զրպարտություններ էին տարածում նրա հասցեին: Դիպուկ է բնութագրել այս ամենը Րաֆֆին Խրիմյանին նվիրված բանաստեղծության մեջ

Եվ նրա ազնիվ ճգնած փոխարեն
Տգետը փշյա պսակ է հյուսում
Իսկ նա լի հուսով յուր սերմն է ցանում
Եվ ապագայում հունցքի սպասում [6]

Վանի հայության ոգին բարձրացնելու նպատակով, Ներսես Վարժապետյանի խորհրդով և իր սեփական ցանկությամբ 1879թ-ի նոյեմբերին Մկրտիչ Խրիմյանը մեկնեց Վան: «Պիտի դառնամ հայրենիքս,- մի նամակում գրել է նա - լռեմ, բերանս հողին տամ, թուղթ ու գրիչ սիրեմ. Վասն զի փորձության հասկացա որ այս աշխարհի մեջ մարդ մեծ պաշտոնի գլուխ անցնելով կարող չէ այնպես մեծագործել, ինչպես յուր և ազգին փափագն է»[7]: Դեկտեմբերին Խրիմյանին ընտրեցին Վասպուրականի հոգևոր առաջնորդ: 1879թ-ին Հայրիկը օգնություն կազմակերպեց Վանի սովյալներին, հիմնեց գյուղատնտեսական գիշերօթիկ դպրոց: 1880-ականներին սկսված ազգային ազատագրական պայքարի վերելքի մեջ իր մեծ ավանդն ուներ Մկրտիչ Խրիմյանը, որը ոչ միայն Վասպուրականի հոգևոր կյանքի ղեկավարն էր, այլև արևմտահայ շատ վայրերի հայության խորհրդատուն և կապող օղակը: Խրիմյանը եռանդուն գործունեություն է ծավալում, օժանդակում Վանի «Սև Խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց» ազգային ազատագրական գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը[8]:

Վանում տեղի ունեցած իրադարձությունների պատճառով 1883թ-ին Մկրտիչ Խրիմյանը հրաժարական է ներկայացնում Վանի Ազգային և Քաղաքական ժողովի անդամներին Վասպուրականի հոգևոր առաջնորդի պաշտոնից ազատվելու համար: Հայրենիքում Խրիմյանի ծավալած հայրենանվեր գործունեությունը կառավարությանը դուր չի գալիս և 1885թ-ին Խրիմյանին կանչում են Կ.Պոլիս: Չնայած խիստ հսկողությանը՝ այստեղ նույնպես ծավալել է հասարակական գործունեություն: Ազգային ժողովը նրա նախաձեռնությամբ թուրքական

[6] Րաֆֆի երկերի ժողովածու հատոր 9րդ, էջ75
[7] Խրիմյան Հայրիկ. Երկեր, էջ7
[8] ysu.am

կառավարությանն է ներկայացրել երկրորդ տեղեկագիր-բողոքագիր՝ հայ գավառների օրըստօրե վատթարացող վիճակի մասին:

1890թ-ի հուլիսի 15-ի Գում Գափույի ցույցից հետո թուրքական կառավարությունը նրան աքսորել է Երուսաղեմ:

1892թ-ի մայիսի 5-ին Էջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ հայ հոգևոր և աշխարհիկ պատգամավորների միաձայն քվեարկությամբ 72 քվեով Մկրտիչ Խրիմյանն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս: Սակայն սուլթանը չի համաձայնվում Խրիմյանին ազատել թուրքահպատակությունից և միայն տասներեք ամիս անց Ռուսաստանի ցարի միջնորդությամբ նրան թույլատրել է գնալ Սուրբ Էջմիածին: 1893թ-ի սեպտեմբերի 26-ին Խրիմյանը օծվել է Ամենայն հայոց կաթողիկոս: Անհամաձայնություն էր տիրում ճեմարանի ուսուցչական կազմի մեջ: Ազգային կուսակցությունները իրենց տարաձայնությունները փոխադրել էին ճեմարան: Վեհափառի միջամտությամբ այդ խնդիրը լուծվում է: Կաթողիկոսը միջամտում է ոչ միայն Գեվորգյան ճեմարանին, այլ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և Շուշիի Թեմական դպրոցի հուզումներին: Կաթողիկոսական գործունեության ողջ ընթացքում Խրիմյանն իր ուշադրության կենտրոնում պահում է դպրոցական խնդիրները: Կաթողիկոսի աշխատանքներում մեծ տեղ է գրավում նաև հրատարակչական գործի կարգավորումը: նա մեծ ջանքեր է թափում կաթողիկոսության պաշտոնական օրգան «Արարատ» ամսագրի հրատարակչության գործը անհրաժեշտ աստիճանի բարձրացնելու համար: Կաթողիկոսի կողմից կազմվում են խմբագրական և տպագրական մարմիններ: Վեհափառի առաջնահերթ գործերից մեկը դարձավ սինոդի աշխատանքները կանոնավորելը: Նա անձնական օրինակով ստիպում էր սինոդին կատարել ամենօրյա աշխատանք: Աքսորավայրում անգործությամբ դատապարտված Խրիմյանը Էջմիածնում ցուցաբերում է գործելու արտակարգ եռանդ:1895թ-ին Խրիմյան Հայրիկը մեկնում է Սանկտ-Պետերբուրգ և Նիկոլայ երկրորդ ցարին ներկայանում է Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների իրականացման խնդրագրով: 1894-1896թթ-ին արևմտահայերի ջարդերի ժամանակ Վեհափառն անում է առավելագույնը նյութապես օգնելու գաղթականներին, պայմաններ ստեղծելու հայրենի երկիր վերադառնալու համար: Խրիմյանի կաթողիկոսական շրջանը համընկավ հայ ժողովրդի ողբերգական և հերոսական մի ժանակաշրջանի հետ: Այդ տասնամյակի ընթացքում երկու բռնապետությունները (Թուրքական և Ռուսական) հարձակում սկսեցին հայ ազատագրական շարժումների վրա: Եթե Խրիմյանի գործունեության առաջին շրջանը կապված էր

գլխավորապես Թուրքիայի ավազակապետության հետ, ապա նրա կյանքի վերջին տարիները խռովեցրին ցարական կառավարության հակամարդկային գործողությունները:

Դարեվերջի տասնամյակին շարունակվում էր ցարական բյուրոկրատիայի հայկական դպրոցներ փակելու ծրագրված աշխատանքը: 1903թ-ի հունիսի 12-ին ցարական կառավարությունը օրենք ընդունեց հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին: Ամենայն հայոց կաթողիկոսը հերոսական, աննահանջ պայքար ծավալեց այդ որոշման դեմ: Նա հատուկ կոնդակով հոգևորականությանը հորդորեց չենթարկվել հրամանին: Նիկոլայ երկրորդին ուղղված նամակում Հայրիկը բողոքում է, որ հայոց եկեղեցու համար կենսական նշանակություն ունեցող այդ օրենքն ընդունվել է առանց իր գիտության: Հայությունը ոտքի ելավ պաշտպանելու եկեղեցու ոտնահարված շահերը: Դաշնակցական Ռոստոմը ստանձնեց դիմադրության ղեկավարությունը: Երկու տարի շարունակվող համաժողովրդական պայքարը, ցարական կառավարության արտաքին և ներքին բարդ իրադրությունների մեջ, տվեց դրական արդյունք: 1905թ-ի օգոստոսի 1-ին հրապարակվեց ցարի հրամանագիրը՝ հայ եկեղեցու գույքը վերադարձնելու և ազգային դպրոցները վերստին բացելու վերաբերյալ:

Մեծ է Ամենայն հայոց կաթողիկոսի ջանքերը հայ-թաթարական ընդհարումները դադարեցնելու և խաղաղություն հաստատելու մեջ: Նա բանակցություններ վարեց ցարական տարբեր աստիճանավորների, մուսուլման հոգևորականների հետ: 1907թ-ի հոկտեմբերի 29-ին վախճանվեց առաքյալը, և ժողովուրդն իրեն որբ զգաց:

բ) Երկաթե շերեփ

Ավարտին էր մոտենում ռուս-թուրքական պատերազմը: Արևմտահայ հասարակական գործիչները Խրիմյանի գործունեությամբ որոշում են, որ անհրաժեշտ է ձեռնարկել որոշակի միջոցառումներ ռուս-թուրքական հաշտության պայմանագրում հայության շահերը ներկայացնելու համար: Հայության շահերը բարձրացնողը պետք է լիներ Կ.Պոլսի հայոց պատրիարքը: Սակայն, Խրիմյանի կարծիքով, Ներսես Վարժապետյանը այդ ժամանակ գտնվում էր «ազգավնաս» դիրքերում: Այդ պատճառով Խրիմյանը նախաձեռնությունը վերցնում է իր ձեռքը: 1877թ-ի նոյեմբերին Խրիմյանն իր բնակարանում հրավիրում է մայրաքաղաքի հայ եպիսկոպոսներին, նրանց բացատրում Ներսես Վարժապետյանի դիրքի վնասակարությունը և համոզում «տապալել Վարժապետյանին և նրա փոխարեն պատրիարքական աթոռի վրա ազգային քաղաքականության նոր ուղղություն տալու ընդունակ մի այլ հարմար անձ

բազմացնել»[9]: Խրիմյանի նախաձեռնությամբ այդ խորհրդակցությունը ընդգծեց ազգային քաղաքականության նոր ուղղությունը: Պատրիարքը կառավարության սիրաշահելուց անցավ «հայկական խնդրի» արծածմանը:

Այդ ժամանակ արևմտահայ հասարակական գործիչների մեջ ձևավորվել էին մի քանի ուղղություններ, կապված այն հանգամանքների հետ, թե որ պետության հետ էին կապում հայկական հարցի լուծումը: Տարբեր հայացքներ ունեցող գործիչները ջլատում էին ազգի ուժերն ու միասնությունը: Սակայն Բեռլինի վեհաժողովում Հայկական խնդիրը լավագույն ներկայացնելու նպատակով համաձայնություն տիրեց բոլոր գործիչների միջև: «Կուսակցական ոգիները լռած են և Հայաստանի ոգին է, որ կխոսի միայն. սրբազան Ներսես Մորցն էլ տվավ իր բոլոր սխալները և ամեն կուսակցության ալ սիրելին եած է այժմ»[10]: Բեռլինի վեհաժողովը հրավիրվել էր Անգլիայի նախաձեռնությամբ որպեսզի քննարկեն Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Թուրքական կառավարությունը առաջարկեց հայերին նույնպես մասնակցել վեհաժողովին՝ իրենց պահանջները ներկայացնելու համար: Արևմտահայ պատմաբան Ալբոյաջյանը դիպուկ է ներկայացրել այդ հանգամանքը թե ինչու Թուրքիան թույլ տվեց հայերին ծավալել որոշակի գործողություններ: «Պեռլին դիմեն և իրենք էլ պահանջներ ներկայացնեն, այս կերպով չեզոքացնելու համար Պալքանյան ազգերի և անոնց ազատարար Ռուսո առավելագույն պահանջները»[11]:

Գրիգոր Օտյանի անմիջական խորհրդով կազմվեց պատվիրակություն Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ: Մկրտիչ Խրիմյանը Արևմտյան Հայաստանի իրավիճակին քաջատեղյակ, ողջ հայության անմնացորդ հարգանքին և համակրանքին արժանացած անձնավորություն էր: Նա չէր տիրապետում Եվրոպական ոչ մի լեզվի և այդ պակասը լրացնելու նպատակով Խրիմյանի քարտուղարի և թարգմանչի պաշտոնում նշանակվեց քսաներկուամյա Մինաս Չերազը, որի միակ առավելությունը ֆրանսերենի իմացությունն էր: Պատվիրակության կազմում էր դարձյալ հոգևորական, եպիսկոպոս Խորեն Նարբեյը և Ստեփան Փափազյանը: Նարբեյը ուղևորվեց Պետերբուրգ Ռուսական արքունիքին արևմտահայ ժողովրդի խնդրագրերը ներկայացնելու նպատակով: Կարևոր առաքելության ավարտից հետո նա պետք է ուղևորվեր Բեռլին՝ միանալու գլխավոր պատրիարքությանը:

[9] Սարուխան, Հակական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910թթ), հ. Ա. , էջ265
[10] Մշակ, 1878թ թիվ 48
[11] Ա. Ալպոյաջյան. Պատմություն Մալաթիո հայոց, էջ835

1878թ-ի մարտին պատվիրակությունը շոգենավով դուրս է գալիս Օսմանյան կայսրության մայրաքաղաքից և հասնում Բրինդիզի նավահանգիստ ու այնտեղից երկաթուղով շարունակում իրենց ճանապարհորդությունը դեպի Հռոմ: Եվրոպական տերություններին ներկայացվելիք տեղեկագրերը կազմված էին հայերեն: Ճանապարհին Խրիմյանի թարգմանիչն ու քարտուղարը ֆրանսերեն պետք է թարգմաներ այդ պաշտոնական գրությունները: Այդ փաստը անգամ վկայում է ողջ ճանապարհորդության հապճեպության, անպատրաստվածության մասին: Խրիմյանի ձեռքին կար պատրիարքի կողմից հաստատված մի փաստաթուղթ, որը հավաստում էր նրա պատվիրակ լինելը: Տեղին է նշել որ երբ հարցնում են Խրիմյան Հայրիկին, թե դու եվրոպական ոչ մի լեզուներ չգիտես ինչպես պետք է հայկական հարցը բարձրացնես եվրոպական տերությունների ղեկավարների առջև: Նա նշում է որ կխոսի մի լեզվով որ բոլորի համար հասկանալի կլինի, դա լացն է: Այսպիսի մեծ հույսերով ու ակնկալիքներով պատվիրակությունը մեկնեց Եվրոպա:

Հռոմում պատվիրակները հանդիպեցին Իտալիայի արտաքին գործերի հախարար կոմս Կորտիին, որը մինչ այդ պաշտոն վարելը եղել է Կ.Պոլսում Իտալիայի դեսպանը: Իտալիայի արտաքին գործերի նախարարը սիրալիր պատասխաններ է տալիս հայ պատվիրակներին և խոստանում է, որ կպաշտպանի հայերի շահերը: Ոգևորված նախարարի սիրալի ընդունելությունից, պատվիրակները ծածկագիր հեռագրով իրենց ուրախությունն են կիսում պատրիարքի հետ և հայտնում են Փարիզ ուղևորվելու մասին:

1878թ-ի մարտին նրանք Փարիզում էին: Խրիմյան Հայրիկը Փարիզում հանդիպում է եգիպտահայ պետական գործիչ Նուբար փաշայի հետ: Նուբար փաշան տեղյակ էր, որ հայկական պատվիրակությունը ցանկանում է, որ Հայաստանին ինքնավարություն տրվի Լիբանանի օրինակով, այսինքն՝ տեղական ինքնկառավարում սուլթանի գերիշխանությամբ և Եվրոպայի երաշխավորությամբ: Կ.Պոլսի հասարակական գործիչները գտնում էին, որ ժամանակը հասունացած է նման պահանջներ առաջադրելու համար: Նուբար փաշան համամիտ չէր, այդ պահանջներին: Նա հասկանում էր, որ Ռուսաստանի և Անգլիայի հակամարտության պայմաններում նրանք չեն համաձայնի այդ ինքնավարությանը, ոչ էլ Թուրքիան համաձայնություն կտար դրան: Այդ պատճառով Նուբար փաշան ձեռնամուխ եղավ կազմելու սեփական ծրագիր, ուր նա առաջարկում էր ավելի չափավոր պահանջներ:

Խրիմյան Հայրիկն ու Մինաս Չերազը հանդիպում են Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Վադինգտոնի հետ: Նա հարցնում է, թե հայերը արևմտյան Հայաստանի ո՞ր

նահանգի համար են ինքնավարություն պահանջում: Խրիմյանը Էրզրումի, Վանի, մասամբ նաև Դիարբեքիրի ու Տրապիզոնի նահանգներն է նշում: Կարճատև զրույցի ընթացքում Ֆրանսիայի նախարարը վստահեցնում է, որ կգործադրի իր բոլոր ջանքերը հայկական դատը պաշտպանելու համար: Բայց նա նկատում է որ հայերի ներկայացրած փաստաթղթերը պարունակում են միայն ընդհանուր գաղափարներ, մինչդեռ մեծ տերություններին անհրաժեշտ են «շոշափելի ապացույցներ»: Նախարարն առաջարկում է շտապ կարգով ներկայացնել վիճակագրական փաստաթղթեր, որոնց մեջ մանրամասն ցույց տրվի հայերի քանակը և տոկոսային հարաբերությունը նշված նահանգներում:

Հաշվի առնելով նախարարի դիտողությունները, պատվիրակությունը ներկայացնում է ապագա ինքնավար Հայաստանի քարտեզը, որում մանրամասն նշված էին թե որ նահանգներում են հայերը կազմում բացարձակ մեծամասնություն, որոնց համար էլ խնդրում են ինքնավարություն: Պատվիրակները հաշվի չեն առնում նախարարի դիտողությունները Հայաստանի և Լիբանանի տարբեր իրավիճակների վերաբերյալ, այդ իսկ պատճառով փոփոխության չի ենթարկվում և՛ խնդրագիրը, և՛ բարենորոգումների ծրագիրը: Փարիզում հայ պատվիրակները հանդիպում են Անգլիայի դեսպանին: Դեսպանը խորհուրդ է տալիս մեկնել Լոնդոն և հանդիպել արտաքին գործերի նախարար Սոլսբերիի հետ: Ապրիլի 11-ին հայ պատվիրակությունը Փարիզից մեկնում է Լոնդոն: Հայկական պատվիրակությունը Անգլիա հասավ այնպիսի մի ժամանակ, երբ տեղի հասարակական կարծիքը գործում էր հօգուտ հայերի: Նրանց հայամեդ գործունեությունը մարդասիրական քայլ չէր, այլ զուտ իրենց շահերից ելնելով: Հայկական պատվիրակությունը դեռ Փարիզում էր, երբ լորդ Ջեյմս Բռայսը Լոնդոնում գումարեց հանրահավաք հօգուտ հայերի: Մայիսի 10-ին Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Սոլս Բերին ընդունում է հայկական պատվիրակությանը: Պատվիրակությունը խնդրում է Անգլիայի օժանդակությունը Հայաստանի ինքնավարություն շնորհելու համար: Նախարարը տալիս է անորոշ պատասխան «հայերը իրավունք ունեն լավ վարչություն պահանջելու, բայց ոչ մի պետություն չի կարող այժմից ասել, թե ինչ ձևի վարչություն պիտի շնորհվի նրանց, որովհետև դրա բանաձևը դերևս չէ գտնված և միայն կոնգրեսը կարող է այդ վճռել»[12]:

Երբ հայ հասարակությունը գտնվում էր հույսերի և ակնկալիքների շրջանում, նույն ժամանակ արտաքին աշխարհում ուժերի վերախմբավորում էր գնում: Անգլիայի արտաքին գործերի նախագահ Սոլս Բերին հրահանգներ է ուղղում Կ.Պոլսի իր դեսպանին՝ մի ուշագրավ հավելումով.

[12] Սարուխան նշված աշխատութուն, էջ384-385

«Ասիական Թուրքիան բովանդակում է իր մեջ բազմաթիվ ցեղերից և դավանություններից բաղկացաց ժողովուրդներ, որոնք ընդունակ չեն ինքնավարության և անկախության ձգտում չունեն»[13]: Հայկական պատվիրակությունը Բեռլին հասավ հունիսի1-ին: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Վադինգտոնի խորհրդով Խրիմյանը և Նարբեյը հունիսի 13-ին Ռուսաստանի, Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի և Իտալիայի առաջին ներկայացուցիչներին հանձնեցին խնդրագիրը, Հայաստանի ինքնավարության վերաբերյալ պատրիարքական ծրագիրը և դրանց կից վիճակագրական տեղեկությունները: Կոնգրեսի նախագահ Օտտո Բիսմարկին հայոց պատրիարքը հավելյալ ուղարկել էր պաշտոնական մի գրություն, որում ներկայացնելով իր պատվիրակներին՝ խնդրում էր վեհաժողովի օրակարգի քննարկման հարց դարձնել հայկական հարցը: Հայկական պատվիրակների խնդրագիրը պարունակում էր հայոց պահանջների արդարացիությունը հավաստող փաստարկումներ. «Մենք քաղաքական ազատություն չէ, որ պահանջում ենք և ոչ էլ երբեք ուզում ենք բաժանվել թրքական կառավարությունից: Մենք ուզում ենք Թրքական Հայաստանի մի բաժնում, այն է Էրզրումի և Վանի վիլլայեթներում ու Դիարբեքիրի վիլլայեթի հյուսիսային մասում, ուր թվական առավելություն ունենք թուրքերի վրա... ուզում ենք ունենալ մի հայ վալի, որ պետությունների հավանությամբ կարգվի Բ. Դռնից»[14]: Այդ բոլոր փաստաթղթերը հայ պատվիրակները ներկայացրեցին վեհաժողովի նախագահին, որը դրանք տեղավորեց աղերսագրերի թղթապանակում:

Կոնգրեսին ներկայացվեց նաև մի այլ ծրագիր՝ «Մեկ-մեկ քանի նոթեր Հայաստանի վարչության մեջ մտցվելիք բարենորոգմանց մասին» խորագրով, որը կազմել էր Նուբար փաշան:

Երկու ծրագրերն էլ քննադատության ենթարկվեցին հայության երկու հատվածների աջ և ձախ ուժերի կողմից: Պատրիարքարանի ծրագրի հեղինակների համար խիստ չափավոր էր Նուբար փաշայի ներկայացրած ծրագիրը: Պատվիրակության ղեկավար Մկրտիչ Խրիմյանը այլ կարծիք ուներ այդ երկու ծրագրերի նկատմամբ: Նա հավանություն էր տալիս Նուբար փաշայի կազմած ծրագրին:

Հայաստանի ինքնավարության մասին կազմած ծրագիրը վեհաժողովում չքննվեց: Մասնակից մեծ տերությունները զբաղված էին անորոշ բարենորոգումների մասին մի այնպիսի բանաձև որոնումով, որ գոհացներ բոլոր շահագրգիռ կողմերին: Վեհաժողովի 14-րդ նիստի նախօրեին

[13] Սարուխան նշված աշխատություն, էջ407
[14] Սարուխան նշված աշխատություն, էջ419

պարզվում է Թուրքիայի և Անգլիայի գաղտնի դաշինքի փաստը: Թուրք-անգլիական դաշինքի հայտնությունը տհաճ ներգործություն ունեցավ վեհաժողովի բոլոր մասնակիցների վրա: Հայկական հարցի մասին ընդունած 61-րդ հոդվածի լուրը ստանալով Կ.Պոլսի հայ ղեկավար գործիչները հրահանգում են պատվիրակներին՝ գործադրել վերջին ճիգերը և վերստին դիմել այս անգամ արդեն Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին: Սակայն այդ երկրների լիազոր ներկայացուցիչների փոխարեն հայ պատվիրակներին պատասխանում են երկրորդական պաշտոնյաներ: Հայկական պատվիրակությունները հուլիսի 1-ին բողոքագիր հղեցին վեհաժողովի բոլոր մասնակիցներին: Մկրտիչ Խրիմյանը Եվրոպա էր մեկնել մեծ հույսերով ու ակնկալիքներով, կարծելով թե «համամարդկային վշտի և լացի լեզվով» խոսելը կդրդի մեծ տերություններին կարեկցել հայերին իրենց օրինական պահանջներն ու խնդիրները լուծելու գործում, բայց զգաց «ուժի իրավունքի» մեծ սարսափները: «Այն ազգ և աշխարհ, որ Հայ չէ, մեզ հետ չի լար, այլ մեզ չէ պետք օտարին լաց, բավական է, որ թե՛ տարաշխարհիկ գաղթական հայեր և թե՛ Բյուզանդիոնի պանդուխտ հայեր հիշեն մեր հայրենյաց չարչարյալ որդիքներ և լան: Ես գիտեմ, և դու գիտես, թե սոսկ լալով ու ողբով եթե շաղախենք մեր հայրենյաց հողը՝ հայրենիք չշինվեր»[15]:

Մկրտիչ Խրիմյանը ականատես լինելով մեծ տերությունների դիվանագիտական աճպարարությանը՝ նա վերջնականապես համոզվեց, որ «Արևմտյան քաղաքակիրթ աշխարհին մեջ արդարությունը հանգուցյալ է տիրապես»[16]:

Մկրտիչ Խրիմյանը Գումգափույի Մայր տաճարում նկարագրելով վեհաժողովի ողջ ընթացքը ասաց, որ ապստամբած եվրոպական ազգերը ներկայացել էին իրենց սրերի շաչյունով, իսկ հայերը լոկ աղերսաթերթերով: Խրիմյանը վեհաժողովը պատկերավոր նմանեցրեց հարիսայի ճաշկերույթի, որին երկաթե շերեփներով ներկայացաց մասնակիցները կարողանում էին տանել իրենց բաժինը: Բայց քանի որ ինքը միայն «թղթե շերեփ ուներ, այն մնաց հարիսայի մեջ» և ինքը ստիպված էր ձեռնունայն վերադառնալ: Խրիմյանը այլաբանությունից անցնում է ուղղակի խոսքի. «Ժողովուրդ Հայոց, անշուշտ լավ հասկացաք, թե զենքն ինչ կրնա գործել և կը գործե: Ուրեմն սիրելի և օրհնյալ հայաստանցիներ, գավառացիներ, երբ հայրենիք վերադառնալու լինեք, ձեր բարեկամաց և ազգականաց իբրև պարգև՝ մեկ-մեկ զենք տարեք, զենք առեք և դարձյալ

[15] Խրիմյան Հայրիկ. Երկեր, էջ 11
[16] Խրիմյան Հյարիկ. Երկեր, էջ 9

զենք: Ժողովուրդ ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին և բազկին ուժ տուր, մարդն ինքնիրմե պետք է աշխատի որ փրկվի»[17]:

«Երկաթե շերեփի» փոխաբերությունը դարասկզբի ազատագրական պայքարի գործիչների համար միանշանակ է, որ պետք է կռվել: Բայց ժամանակակից քաղաքական պայքարը ցույց է տալիս, որ երկաթե շերեփը և՛ ամենազորեղ, ամենաազդու, կամ մանավանդ միակ միջոցը չէ: Պարզվում է՝ ոչ պակաս նվաճումների կարելի է հասնել, եթե շերեփը ազնիվ մետաղից է:

Այս գլուխը ավարտում ենք Մկրտիչ Խրիմյանի հետևյալ խոսքով «ոսկին հարստությամբ գահ և թնդանոթ միշտ դաշնակիր կմնա աշխարհիս վերա»[18]:

[17] Հ. Աճեմյան. Հայոց Հայրիկ, էջ 511

[18] Մկրտիչ Խրիմյան, Ժամանակ և խորհուրդ յուր, էջ 20

Գլուխ II

Գրական կյանք

Հասարակական գործունեության հենց առաջին տասնամյակում Խրիմյանի անունը լայն ճանաչում է ստանում իբրև գրող: Նրա գրական առաջին երկը 1848թ-ին «Բազմավեպ»ժ-ում լույս տեսած բանաստեղծություն էր նվիրված Արսեն Բագրատունուն: Մկրտիչ Խրիմյանը գրել է բազմաթիվ հոգևոր կրոնաիմաստասիրական երկեր, հրապարակախոսական-պատմական, ազգագրական աշխատություններ: Խրիմյանի մուտքը գրական ասպարեզ նշանավորվեց «Պապիկ և Թոռնիկ» երկով որը պարունակում է կենդանի ու վառ պատկերներ Վասպուրականի գյուղական իրականութունից: Չնայած արտացոլում էր 60-70-ականների իրականությունը և բովանդակում այդ ժամանակաշրջանի միտումները, սակայն արձագանքում է նաև դարեվերջի հրատապ խնդիրներին:

«Պապիկ և Թոռնիկ»-ը Խրիմյանի պատգամն է հայ ժողովրդին՝ վառ պահելու սերը հայրենի հողի նկատմամբ, չլքել: «Թե մեռնիմ, երթամ գերեզման և այլևս չկարիմ խոսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա կը թողում ձեզ գիրս իբրև մշտախոս կտակ և հիշատակ որո միակ նպատակն է, որ հայն յուր հայրենատուր հողեն չբաժնվի, զի յուր սեփական ժառանգություն է դրախտի երկիր» ու պետք է «գործել զերկիր ու պահել»[19]: 1876թ-ին Կ.Պոլսում լույս է տեսնում Խրիմյանի «Դրախտի ընտանիք» աշխատությունը: Աշխատության գրելու առիթ էր դարձել Խրիմյանի պատրիարքության տարիներին Ազգային ժողովի տարբեր հանձնաժողովներում քննարկվող ընտանեական և ամուսնական լուրջ խնդիրները: Նախաբանում Խրիմյանը բացատրում է աշխատությունը գրելու շարժառիթը. «ժամ հասավ, խոստովանիմ քեզ, ով ազգ Հայոց, չորս տարվան պատրիարքությանս շրջանին մեջ քու ընտանեական բազմատիկ աղետները ես ինքնին տեսա և այդ աղետներուն մեջ առավել աղետավոր էին ամուսնական խնդիրները»[20]: Աշխատության մեջ շոշափված և քննարկված հարցերը վերաբերվում են առավելապես երկրային և ոչ երկրային խնդիրներին, այդ պատճառով Խրիմյանը հայցում է իր

[19] Մկրտիչ Խրիմյան. Պապիկ և Թոռնիկ, էջ 30
[20] Մկրտիչ Խրիմյան. Երկեր, էջ 184

զավակների ներողմտությունը որ ինքը՝ Եկեղեցու սպասավորը, Ավետարանի աշակերտը, թողած իր հոգևոր պաշտոնը քննարկում է աշխարհիկ ընտանիքների վերաբերող նյութեր:

Խրիմյանը ազգի հարատևությունն ու առողջությունը կապում է առողջ ու ամուր ընտանիքի հետ: Այդ պատճառով էլ նա իր ողջ եռանդն ու ջանքը ներդրում է հայ ժաղովրդի մեջ ապագայի բարի սերմեր ցանելու, ապահովելու հայ ընտանիքների ամրությունը. «զի ներկան ապագայի հիմն է և ապագան՝ ներկային հաջորդություն և շենք»[21]: Աշխատությունը բաղկացած է 18 փոքր գլուխներից, որոնք բոլորն էլ ունեն խոսուն փորագրեր:

Ընտանիքի ստեղծման Աստվածաշնչյան լեգենդով հեղինակը համառոտ վերապատմում է Սուրբ գրքի մի քանի դրվագներ: Աստվածաշնչյան ոգով Խրիմյանը Հայաստանը համարում է մարդկային ցեղի օրրանը, որտեղից տարբեր ցեղեր և ժողովուրդներ տարածվել են այլ վայրեր: Խրիմյանը մեր ժողովրդի իսկական նախահորը համարում է Հայկին, որը «ազատության և արդարության լույսով» զինված հաղթեց Բելին: Խրիմյանը հայության տարիքը հաշվում է չորս հազար տարի և նշում է, որ մենք հեռացել ենք մեր նահապետական ակունքներից: Պատմության քառուղիներում մեր ժողովուրդը կրել է ծանր հարվածներ. «կոխեցին մեր հայրենյաց փողը, մերթ խառնվեցան ու ձուլվեցան. մերթ տիրեցին ու զորացան, մերթ գերեցին ու կրթեցին, ով կտարակուսի, թե այսքան խառնակությանց մեջ որևիցե ազգ մի կարող է յուր հին ընտանեկան կյանքը ողջ և անեղծ պահել»[22]: Աշխատության չորրորդ գլուխը նվիրված է ամուսնությանը, ընտանիք ստեղծելու գաղափարին: Ըստ Խրիմյանի «ամուսնական օրենքը աշխարհի մարդկության հիմն է, բնության մեջ խորապես հաստատյալ և ոչ ձեռք մի կարե խալխլել զայն»[23]: Աշխատության մեջ քննարկման առարկա է դառնում նաև ընտանիք կազմող զույգերի հավասար իրավունքների խնդիրը: Կնոջ ազատության իրավունքը Խրիմյան Հայրիկը չի համարում Եվրոպայի իրավագիտության նվաճումը, այլ միայն նախկինի վերականգնումը:

Այս աշխատության հիմնական եզրակացությունը այն է, որ ազգի հարատևման հիմքը ընտանիքի հարատևումն է, իսկ նրա հարատևման միակ ուղիղ ճանապարհը «ոգջամիտ կրթությունը և ուղիղ դաստիարակությունը»: «Ժողովուրդը եթե կորստի է դիմում, ապա իր կորստյան ճանապարհ բացողը ընտանիքն է, եթե ծնկները թույլ են, իր քայրերն առաջ չեն գնում՝ կացությունն ընտանիքից է, եթե երկու ձեռքով հարստահարվում է՝ մի ձեռքը ընտանիքից է, եթե արտաքին թշնամիներից պաշարվում է երկիրդ՝ թողնող թշնամին ընտանիքից է, եթե առանց

[21] Խրիմյան Հայրիկ. Երկեր, էջ 185
[22] Խրիմյան Հայրիկ, նշված տեղ, էջ 198
[23] Խրիմյան Հայրիկ, նշված տեղ, էջ 200

տնտեսելու, առանց կանխատեսելու՝ վատնում է իր վաստակն ու գանձը՝ շռայլության տնտեսապետն ընտանիքն է, եթե իր զավակները առույգ, ազնվածնունդ չեն ուրեմն ընտանեկան սերունդը հյուծվելով ստրկացել է, եթե օրիորդներն ու երիտասարդները վարակված են Եվրոպական մաշողական ախտով, դրանց մահ ու գերեզման փորողն ընտանիքն է»[24] :

Մտքեր

Թևավոր խոսքերով և իմաստուն խորհուրդներով հարուստ Խրիմյանի աշխատությունները մեծ մասամբ ծրարային նշանակություն ունեն և մեծ ազդեցություն են թողել հայ հասարակական մտքի վրա: Ահա դրանցից մի քանիսը.

*Մարդուս ազնուութեան ամենափայլուն փաստը նրա մեծահոգութիւնն է և ոչ թէ՝ ունեցած հարստութիւնը:

*Նա է իսկական ազնիւ անձ, որ դէպի ժողովուրդը ունեցած սիրոյ մէջ է փնտրում իւր փառքը:

*Մարդս ծնւում է իւր մեծ պարտքը կատարելու համար, ուստի քանի նա կենդանի է, պետք է գործի, որովհետև մահը և գերեզմանը բերում են նրա համար գիշեր, երբ գործելը անկարելի է:

*Տէրը իւր իշխանական գահոյքը դնելով երկնքում, ամբողջ տիեզերքը կառավարում է բնական և յաւիտենական օրէնքներով. նրանք անքակտելի և անփոփոխ են, ոչ ոք չի կարող քանդել կամ փոխել նման աշխարհական կանոնների, որոնք մի ձեռքով գրւում են, իսկ միւսով՝ ջնջւում:

*Մի՞թէ կարելի է մերձաւորից խլած հացով կշտանալ: Ոչ, գողացած և ուժի զօրութեամբ ձեռք բերած հացը շուտ է վերջանում: Անհատնելի և արդար է այն հացը, որ ձեռք է բերւում ճակատի քրտինքով: Ով այս սկզբունքը ոտնատակ տալով է հաց ուտում, նա քանդում է Աստծու պատւիրանը:

*Իշխանութիւնը ժողովրդի և ժողովուրդը իշխանութեան համար է, երկուսն էլ փոխադարձ անհրաժեշտութիւն են. մէկի կամ միւսի բացակայութիւնը կտրում կամ այլանդակում է մեր սօցիալական կեանքը:

*Յաճախ օվկիանոսը փրփրում, ուռչում է ինչպէս լեառը և ապա նստելով, ընդունում է իւր նախկին խաղաղ մակերևոյթը. և այս՝ շնորհիւ բնական օրէնքի, որովհետև ամենազօր ծովերի

[24] Խրիմյան Հայրիկ, նշված տեղ, էջ 220

իշխանը շրջապատել է նրանց մանր աւազով և սահմանափակել փրփրացող ալիքներին, որ նրանք չանցնեն և չողողեն երկիրը: Օ՜. եթէ ամենակարող Աստուածը այսպիսի մի սահման դնէր և մարդոց նաւաճող ոգու դէմ, որ նրանք արեան ծովի մէջ չխեղդդէին խեղճ ժողովուրդը:

*Արևմտեան քաղաքակրթութեան ալիքները շատ խառն են և պղտոր, նրանց մեջ չարը և բարին, խավարը և լոյսը, տգիտութիւնը, գիտութիւնը հոսում են զուգահեռաբար:

*Ընտանիքը և օջախը փոքրիկ թագաւորութիւն է երկրիս վրայ, որի գահի վերայ բազմած են հայրը՝ իբրև թագաւոր և մայրը՝ իբրև թագուհի ու կառավարում են իրանց իշխանութեան տակ եղած ընտանիքը: Այսպիսի ընտանեկան թագաւորութեան մէջ չկայ ոչ պօլիցիական, ոչ նիզակ, ոչ փայտ, և ոչ անկարգութիւն, այլ միայն հայրական սէր և մայրական փաղաքշանք. կրթիչ և ուսուցանող օրինակ է ծառայում ծնողական օրինակը:

Ժողովուրդը այն աստիճան վարժւել է մարդոց ձեռքից թշւառութիւններ կրելուն, որ եթէ նրան ոչխարի նման տանենք սպանդանոց, ոչինչ չզգալով կասեն՝ որ իրանց ճակատագիրն է այդ: Եւ այդ ճշմարտութիւնը ավելի յատուկ է արևելեան ժողովուրդին, որի պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նրանց ստրկացած, անպատւած և ճնշւած ոգի ունենալը, որ ծածկւած է անթափանցելի խաւարով և տգիտութեամբ:

*Դուք մարդ եք, ձեռք ու բազուկ ունիք: Մի՞թե դուք ցանկալի ազատություն առանց զոհի և արյունի ձրի ստանալ կուզեք:

*Այնտեղ, ուր զենքն է խոսողը, ուր սուրեր կշողշողան, այնտեղ ի՞նչ գործ ունին խնդիրք ու աղերսաթուղթք…

*Ժողովո՛ւրդ, ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին ու բազուկին ուժ տուր, մարդ ինքնիրմե պիտի աշխատի, որ փրկվի… [25]

[25] Խրիմյան Հայրիկ. Երկեր, էջ 190

Եզրակացություն

Մկրտիչ Խրիմյանը XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական կյանքի ականավոր դեմքերից է: Ողջ գիտակից կյանքը նա անմնացորդ նվիրաբերեց այս ժողովրդին: Առաջին գործիչն էր, որ Գուտտենբերգյան հրաշագործությունը՝ տպագրական մեքենան գործարկեց արևմտահայ մութ հորիզոններում, առաջին լույսի ճառագայթը սփռեց խավարի թագավորությունում:

Մկրտիչ Խրիմյանին տրված «Հայրիկ» փաղաքշական պատվանունը արժանապատվությամբ կրեց ողջ կյանքի ընթացքում: Խրիմյանը հուսախաբված վեհաժաղովի ընթացքից և արդյունքից մեծ տերությունների վարած քաղաքականությունից հանգելով «իրավունքը ուժի մեջ է» կարգախոսին, ժողովրդի հետ ունեցած անմիջական հանդիպումների ժամանակ Խրիմյանը արծածեց «երկաթե շերեփի» գաղափարը:

Մկրտիչ Խրիմյանի կյանքի և գործունեության ուսումնասիրությունը նրա՝ հայրենիքին և ժողովրդին ծառայելու օրինակը այսօր էլ վարակիչ է դաստիարակիչ մեր և գալիք սերունդների համար: Իրավամբ նա արժանացել է իր ժամանակի և հետագա սերունդների հարգանքին, սիրուն և պատկառանքին:

Այսօր խիստ արդիական է վերհանել և արժևորել Խրիմյանի անաչառ գնահատականը անցյալի պատմական դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ: Կառանձնացնենք հետևյալ շեշտադրումները.

1. Արևելյան խնդրի էության խորքային և ճիշտ մեկնաբանությունը: «Երբ գահեր կռիվ կուզեն՝ Արևելյան խնդիր կհուզեն, և երբ աշխարհակալել կամին՝ դարձյալ Արևելյան խնդիր կհուզեն... մինչև ե՞րբ զորավարներ կռվին՝ տկար և անզոր ազգեր ոտքի տակ ճմլվին»[26]:

2. Խրիմյանի ինքնապաշտպանության քարոզների անհրաժեշտությունը և կարևորությունը հայ ժողովրդի համար բոլոր ժամանակաշրջաններում: «Ժողովուրդ հայոց, սկսեց Հայրիկը: Մուշից Պոլիս էին եկել մի հայ և մի քիւրդ: Եկուսն էլ համալութիւն էին անում: Երկուսն էլ ստակ ժողովեցին եւ մտածեցին հայրենի օջախ վերադառնալ:

Քիւրդն իր ժողված ստակը տւեց եւ մի լաւ հրացան եւ փամփուշտներ գնեց եւ վերադարձաւ հայրենիք: Հայը իր գանձած ոսկին ծոցումը կարեց եւ առնելով պարկն ու գաւազանը նորից Մուշ գնաց: Քուրդն իմացաւ հայու գալը, դարան մտաւ, զարկեց գնդակով, սպանեց հային, առաւ նրա մօտի ոսկիները ու լօ-լօ ասելով գնաց իր տուն: Առակս այս ի՞նչ ցուցանի. այն որ քրդի հետ

[26] Սարուխան, նշված աշխ. , էջ 265

սպրողը պիտի անոր նման՝ հետը հրացան ունենայ: Մնացածը ձեզ հասկանալի է»[27], ինքնապաշտպանության քարոզն էր, որ երեսուն տարի շարունակ կհնչվեր Հայրիկի բերանից:

3. Խրիմյանի բարոյական դասերը այժմ ևս պահպանում են իրենց հնչեղությունը և հրատապությունը: Խրիմյանը բացահայտում է այն արատավոր երևույթները որոնք հասցնում են ընտանիքին քայքայման և անկման՝ դրանց շարքերում դասելով կեղծ նորասիրությունը, շռայլ կենցաղը, խաղամոլությունը: Խրիմյանը տալիս է ազգի հարատևման միակ ճիշտ ճանապարհը «ողջամիտ կրթություն և ուղիղ դաստիարակություն»: «Ո՜վ հայ ժողովուրդ ես գովում եմ քո եռանդը, որ դեպի առաջադիմություն է ձգտում, սակայն ազնիվ եղիր ինքդ քո հետ, հետևիր միայն այն քաղաքակիրթ ժողովուրդներին, որոնց հաջողության հիմքը լուսավորությունն է, դաստիարակությունն ու տնտեսությունն է: Քաղաքակիրթ ժողովուրդն իր երկիրն ու հողը կկարողանա պահել միայն այս երեք բառերով»[28]:

Մեծ հայրենասեր և ազգասեր Մկրտիչ Խրիմյանը կոչ է հղում հայ ժողովրդին վերադառնալ շենացնել և կենդանացնել հայրենիքը: «Եվ դու՛ք ով որդիներ հայոց, որ մեր հին նահապետական տան ժառանգորդ զավակներն եք, այստեղ՝ հայրենի տանը կացեք, մի՛ հեռացեք, սիրե՛ք Մասիսը, մի՛ թողեք հավիտյան նահապետական տունը ընտանիքը: Դուք Մասիսի հարազատ որդիներն եք: Չի լինի ո՛չ Մասիս, ո՛չ գերդաստան, ո՛չ տուն, ո՛չ աղոթք, եթե հեռանաք»[29]:

Հետազոտական աշխատանքը ավարտում ենք Խրիմյան Հայրիկի մեզ ուղղված հետևյալ պատգամով «Հայե՛ր, պի՛նդ բռնեցեք ձեր ձեռքի երկաթյա շերեփը, հաստա՛տ մնացեք այն վեմի վրա, ուր կանգնած եք այսօր, վա՛յ այն ազգին որ իր հույսը դնում է հեռավոր մեծամեծների խղճի վրա»[30]:

[27] blognews.am և հանրագիտարան
[28] Խրիմյան Հայրիկի Երկեր, էջ 200
[29] Մկրտիչ Խրիմյան. Դրախտի ընտանիք, էջ 250
[30] Հայրապետական աթոռոց Սուրբ Էջմիածնի

Օգտագործված գրականության ցանկ

1. Մալումյան Խ. , Խրիմյան (Կենսագրական տեսություն, Թիֆլիս, 1892թ)

2. Կոստանդյան Է. , Մկրտիչ Խրիմյան (հասարական քաղաքական գործունեությունը, Երևան, 2000թ)

3. Խառատյան Ա. , Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երևան 1989թ

4. Սարուխան Ա. , Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), հ. Ա. , Թիֆլիս 1912թ

5. Ալպոյաջյան Ա. , Պատմություն Մալաթիո հայոց, Պեյրութ, 1961թ

6. Աճեմյան Հ. , Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929թ

7. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ.9. Երևան 1958թ

8. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան 1992թ

9. Մկրտիչ Խրիմյան, ժամանակ և խորհուրդ իւր, Կ.Պոլիս 1876թ

10. Մկրտիչ Խրիմյան, Պապիկ և Թոռնիկ, Էջմիածին 1894թ

11. Մշակ, Թիֆլիս, 1878թ, թիվ 48

12. Հայրապետական աթոռոց Սուրբ Էջմիածնի, Էջմիածին 1982թ

13. blognews.am և հանրագիտարան

14. ysu.am